ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 89 -Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի № 9-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 270-Լ որոշմամբ հաստատված ներքին գործերի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 13-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023 թվականի մայիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության հաստիքացուցակը հաստատելու մասին» № 9-Լ հրամանով հաստատված հավելվածի կազմհաստիքային փոփոխությունների ցանկի «ՀՀ ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչություն» սյունակի «Վարչության պետ /27ՈԾ-33.4-Գ3-1/» տողում «ոստիկանության գնդապետ» բառերը փոխարինել «ոստիկանության գեներալ-լեյտենանտ» բառերով:
2. Հրամանը հայտարարել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության իրավասու աշխատակիցներին և ծառայողներին:

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

08.12.2025

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ